



ԵՐԿՈՒՇԱՔԹԻ, 13 ՅՈՒՆԻՍ, 2016

### ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՊՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, Կուր ինձ իմաստութիւն Կբարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեա Կիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

### ՍԱՂՄՈՍ 15

Ի՞ՆՉ ԿԸ ՊԱՀԱՆՁԷ՛ՏԵՐԸ

**Տ**էր, ո՛վ արժանի պիտի ըլլայ քաճարիդ մէջ ըլլալու,  
ո՛վ արժանի պիտի ըլլայ սուրբ լեռանդ վրայ բնակելու:  
Ան՝ որ անբիծ կեանք մը կ'ապրի,  
արդարութիւն կը գործէ,  
եւ միայն ճշմարտութիւնը կը խորհի ու կը խօսի.  
որ չի գրպարտեր բնաւ, իր ընկերոջ չարիք չ'ըներ,  
եւ դրացին չի նախապեր:  
Ան՝ որ կ'արհամարհէ Աստուծմէ մերժուածները,  
մինչ կը պապուէ աստուածավախ մարդիկը:  
Որ յանձն կ'առնէ իր երդումը յարգելով  
վնաս կրել, քան թէ իր խօսքը դրժել:  
Ան՝ որ իր դրամը փոկոսով չի փար,  
եւ կաշառքի փոխարէն անմեղին դէմ վկայութիւն չի փար:  
Այսպէս ապրող երբեք պիտի չսասանի:

### ՇԱՐԱԿԱՆ - ԱՊՈԹՔ

*Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:  
Վմենասուրբ Երրորդութիւն, սուր աշխաՀիս խաղաղութիւն:  
Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցելոց արքայութիւն:  
Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւէն ես նեղելոց:  
Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:*

### ԱՊՈԹՔ

*Պահապան ամենայնի Զրիստոս,  
աշ քո հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,  
ի նստիլ ի տան, ի գնալ ի ճանապարհ,  
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.  
եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:*

# ՕՐՈՒՄՆ ՆԻՒԹԸ



ԿՈՐՆԹԱՅԻՆԵՐՈՒՄ ՈՒՂՂՈՒՄԾ ԱՌԱՋԻՆ ՆԱՄԱԿԸ (ԳԼԽ 14:1-40)



## ԼԵԶՈՒՆԵՐ ԽՕՍԵԼՈՒ ԵՒ ՄԱՐԳԱՐԷԱԿԱՆ ՇՆՈՐՀՆՔՆԵՐԸ (14:1-25)

12րդ գլուխէն սկսեալ Պօղոս Առաքեալ քննարկեց հոգեւոր խնորհներու հարցը, որով պարճաւ դարձած էր կորնթոսի համայնքէն ներս պառակտումներու: Յարակ ու մէկին բացապրութիւններ փայլով, ու մանաւանդ՝ մարդկային մարմինը ու անոր անդամները օրինակ առնելով Առաքեալը ցոյց փուսալ թէ իւրաքանչիւր քրիստոնէայ իրեն փրուած շնորհները այնպէս մը պէտք է գործածէ ոչ թէ անձնական իր փառքին, այլ եկեղեցոյ շինութեան: Բայց այս բոլորը պէտք է ընել Սիրոյ սկզբունքով: Ահա նոյն այդ սկզբունքին հետամուտ ըլլալու կոչն է որ 14րդ գլուխը պիտի սկսի:

«**Սիրոյ հետամուտ եղէք: Միաժամանակ հոգեւոր պարգեւներուն փափաքող եղէք, մանաւանդ՝ մարգարէութեան**» (1 հմր): Սիրոյ հետամուտ ըլլալ չի նշանակեր միւս շնորհները անտեսել: Ընդհակառակը, երբ սեր ունեցողը ինքզինք չի մրծեր, այլ ուրիշը, կը նշանակէ թէ կը փափաքի ունենալ այնպիսի շնորհ մը որ օգրակար ըլլայ ուրիշին: Այս իմաստով ուրեմն նաեւ հոգեւոր շնորհներուն փափաքող ըլլալ, մանաւանդ՝ մարգարէութեան: Շնորհ մը, որուն օգրակարութիւնը բոլորին համար է: Որովհետեւ լեզուներ խօսելու պարագային, մանաւանդ երբ այդ խօսուածը չի թարգմանուիր, ոչինչ կ'օգրուի գայն լսողը, կամ ընդհանրապէս եկեղեցին ինք: Ինչո՞ւ փափաքող ըլլալ մարգարէութեան շնորհին, որովհետեւ «**մարգարէութիւն ընողը կը խօսի մարդոց անոնց հաւաքքը ամբալոյելու, զանոնք միխթարելու եւ քաջալերելու համար**» (3 հմր): Ահա թէ ինչու Առաքեալը կը շեշտէ, որ «**մարգարէութիւն ընողը աւելի օգրակար կ'ըլլայ, քան լեզուներ խօսողը, բացի այն պարագային՝ երբ թարգմանող մը գրնուի, եւ ամբողջ եկեղեցին օգրուի**» (5 հմր): Որովհետեւ ամբողջ նպարակը այս շնորհներուն եկեղեցոյ օգրութիւն համար է:

Ահա մէկ այլ ուրիշ օրինակով մը, այս անգամ նուագարաններու, Պօղոս Առաքեալ կ'ուզէ ցոյց փայլ, թէ բարար չէ պարգապէս ձայն հանել, եթէ երբեք այդ ձայնը իմաստ չունի: Այնպէս ինչպէս նուագարանները (7-8 հմր): Անգամ մը եւս, Առաքեալը կը քաջալերէ զիրենք ըսելով. «**Քանի որ հոգեւոր պարգեւներու կը փափաքիք, ջանացէք մանաւանդ ունենալ այն պարգեւները՝ որոնք եկեղեցոյ օգրութիւն կը սպասարեն**» (12 հմր): Ուրեմն, որքան այդ հոգեւոր պարգեւները օգրագործենք ուրիշի համար, այնքան այդ պարգեւները կ'աւելան: Ինչպէս պիտի ըսէ Որոգինէս. «*Ուել շնորհք աւելցնելու կերպը գայն այնոց համար գործածելն է, այլապէս եղածն ալ կը նուագի եւ կ'ոչնչանայ*»:

Պօղոս Առաքեալ կը թելադրէ, որ «**այն անձը որ անձանօթ լեզուներով կը խօսի՝ թող աղօթէ որ Աստուած անոնց թարգմանութեան պարգեւն ալ փայ իրեն**» (13 հմր): Որպէսզի լսողը ոչ միայն լսէ, այլ նաեւ հասկնայ: Այս կ'անցնի հոգի եւ միտքի փոխարարութեան ու գործունէութեան: Այնպէս ինչպէս պիտի ըսէ Քրիստոս. «Սիրէ քու Տէր Աստուածդ, քու բոլոր սրտովդ, միտքովդ, հոգիովդ եւ զօրութեամբդ»: Այսպէս եւս Պօղոս Առաքեալ կը բացապրէ, որ եթէ պիտի աղօթես ոչ միայն հոգիով, այլ նաեւ՝ միտքով, այսինքն՝ գիտակցաբար, հասկնալով ու հասկցնելով, որպէսզի լսողը օգրուի, ու մանաւանդ ըսէ «Ամէն», այսինքն՝ այդ, թող ըլլայ, ճշմարիտ է ըսուածը:

Հետեւաբար, «**միտքով երեխայ մի՛ ըլլաք. երեխաներու պէս եղէք միայն չարիք խորհելու մէջ. իսկ անկէ անդին հասուն մարդու պէս խորհեցէք**» (20 հմր): Հետաքրքրական է արտայայտութիւնը Առաքեալին, որ ըսել կ'ուզէ երեխաներու պէս հետամուտ մի ըլլաք այնպիսի շնորհներու որոնք միայն երեւելի են, անձին փառքին համար: Երեխաներու պէս եղէք չարիք խորհելու մէջ, այսինքն՝ երեխան չարաճճութիւն կրնայ ընել, բայց չարամիտ չէ:

Եսայի մարգարէէն մէջբերումով մը Պօղոս Առաքեալ կու գայ ցոյց փայլու թէ լեզուներ խօսելու շնորհքն եւ մարգարէութեան շնորհքը հաւաքացեալներուն եւ թէ անհաւաքներուն համար է: Ահա այս ձեւով կարելի է հասկնալ հարուածը, ինչպէս պիտի բացապրէ Շնորհք Պարբարք. «*լեզուներ խօսիլը ոչ թէ միայն անհաւաքներու համար է, այլ առաւելապէս անհաւաքներու համար է, իբրեւ նշան: Ի պահանջել յարկին ինչու չէ նաեւ հաւաքացեալներուն համար, մանաւանդ երբ այդ խօսուածը թարգմանուի, հասկնալի դառնայ: Իսկ մարգարէութիւնը ոչ այնչափ անհաւաքներուն, այլ առաւելաբար հաւաքացեալներուն*»: Միւս կողմէ լեզուներ խօսիլը չէ մերժուած ըլլալու պարագան, այլ որքան այն անկարգութիւնը որ փրկի կ'ունենար համայնքէն ներս, որուն պարճառով շարեր կրնային գայթակղիլ:

## ԿԱՐԳ ՈՒ ԿԱՆՈՆ ԵԿԵՂԵՑԻՔՆ ՆԵՐՍ (14:26-40)

Ահա Առաքեալին մտախոհութիւնը: Ոչ միայն այդ շնորհները օգտագործել յօգուտ եկեղեցւոյ, այլ նաեւ այնպէս օգտագործել որ կարգ ու կանոնը պահուի, ու ներդաշնակօրէն փեղի ունենայ պաշտամունքը կամ հաւաքը:

Ուրեմն ի՞նչ ընել:

1. «Երբ մէկտեղ կը հաւաքուիք, ձեզմէ իւրաքանչիւրը ինչ շնորհք ալ ունենայ՝ թող այդ բոլորը եկեղեցւոյ օգուտին ծառայեցնէ» (26 հմբ):
2. «Լեզուներ խօսողներ կա՞ն. մէկ առ մէկ: Ուրիշ մըն ալ խօսուածը բացապրէ: Բացապրող չկայ, այդպիսին թող լուռ մնայ, իր մտքին մէջ Աստուծոյ հետ խօսի» (27-28 հմբ):
3. «Աստուծոյ պարգաւները քարոզողներ կա՞ն՝ թող երկու կամ երեք հոգի խօսի, իսկ միւսները թող քննարկեն խօսուածը», որպէսզի ստուգեն անոր ճշմարտացիութիւնը ու չմոլորին կամ մոլորեցնեն:

Այս բոլորը, որովհետեւ. «Աստուած անկարգութիւն չի կամենար, այլ՝ խաղաղութիւն» (33 հմբ): Սա կը նշանակէ, եթէ Աստուած կը ներշնչէ մէկը պարզամ մը փալու, յանկարծ ուրիշ մը չի ներշնչեր, որպէսզի անկարգութիւն չըլլայ, իսկ եթէ կը ներշնչէ կը նշանակէ թէ պէտք է առաջինը լռէ: Որովհետեւ ճշմարիտ ու աստուածային ներշնչումը երբեք պարճառ չըլլար պայքարի ու շփոթի, կամ նախանձի ու պառակտումի: Ուրեմն եթէ խաղաղութիւն չկայ, կը նշանակէ թէ աստուածային չէ փրութիւնը շնորհը:

Ապա Պօղոս Առաքեալ մէկ այլ ուրիշ թելադրութիւնը մը կ'ընէ այս անգամ խօսքը ուղղելով կիներուն: Հատուած մը որ խնդրոյ առարկայ դարձած է, մանաւանդ՝ այսօր: Բայց եթէ հատուածը նկարի ունենանք իր շրջագիծին մէջ, ու այն կացութիւնը որ կը փրկէր Կորնթոսի համայնքէն ներս, այն արեւն աւելի յստակ կը դառնայ Առաքեալին թելադրութիւն յանդիմանութիւնը, մանաւանդ այդ յանդիմանութիւնը նոյնինքն Քրիստոսի կողմէ: Հատուածը կու գայ ցոյց փալու, թէ ըստ երեւոյթին կորնթացի կիները հաւասարութիւն կը պահանջէին, բայց այնպիսի ձեւով որ եկեղեցւոյ մէջ անկարգութիւն փեղի կ'ունենար: Այլապէս, Աստուածաշունչին մէջ կը հանդիպինք հատուածներու, որոնք ցոյց կու փան կիներու դերը եկեղեցւոյ կեանքէն ներս: Բայց այսպէղ Առաքեալին թելադրութիւնը անոր համար, որ պահեն եկեղեցւոյ խաղաղութիւնը, կարգ ու կանոնը, եւ ինչ որ պիտի ընեն պարկեշտութեամբ ընեն: